## ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԿՈՆԴԱԿԸ ՀԱՅԿ ՄԻՍԱՔՅԱՆԻՆ «Ս. ՆԵՐՍԵՍ ՇՆՈՐՀԱԼԻ» ՇՔԱՆՇԱՆՈՎ ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

### ՍԻՐԵՑԵԱԼ ՈՐԴԻՈՅ ՄԵՐՈՒՄ ԵՒ
### ՀԱՐԱԶԱՏԻՆ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ ՍՐԲՈՅ ԷՋՄԻԱԾՆԻ
### *ՏԻԱՐ ՀԱՅԿ ՄԻՍԱՔԵԱՆԻ*
### ՈՐ Ի ԹՈՐՈՆԹՕ, ԳԱՆԱՏԱ

Սրտի խոր գոհունակութեամբ իմացանք Գանատահայոց Թեմի բարեխնամ Առաջնորդ՝ Գերաշնորհ Տ. Յովնան Արքեպիսկոպոս Տէրտէրեանէն, որ Ձեր անհատական կեանքը իմաստութեամբ և գնահատելի նախանձախնդրութեամբ գիտցած էք միախառնել մեր Առաքելական Ս. Եկեղեցւոյ, մեր ազգի, հայրենիքի, Հ.Բ.Ը.Մ.-ի և Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հաւաքական կեանքին:

Կ. Պոլսէն մինչև Թորոնթօ-Գանատա, անցնող տասնամեակներու ընթացքին Դուք կենսունակ և պերճախօս կերպով արտայայտեցիք Ձեր անհուն սէրն ու նուիրման ոգին հանդէպ մեր Ս. Եկեղեցիին, Գանատայի Հայոց Թեմական իշխանութեան ներքև, անշահախնդիր կերպով ծառայելով ծխական մակարդակէն մինչև եկեղեցաշինական և դաստիարակչական մարզերը, յատկապէս երիտասարդ հայ սերունդին:

Հայաստանի անկախութեան հռչակումէն ասդին մանաւանդ Դուք գիտցաք Հայրենիքի ծառայութիւնները ներդաշնակօրէն միացնել եկեղեցական և բարեսիրական ու դաստիարակչական Ձեր գործին: Հայրենիքը իր դեսպանատուներով և "ՀԱՅԱՍՏԱՆ" Համահայկական Հիմնադրամով և այլ կառոյցներով պէտք ունի ամէն մէկ հայու քրտինքին անկախաբար անոր գաղափարական կամ այլ կարգի պատկանելիութիւններէն:

Ի գնահատութիւն ձեր բազմամեայ և բազմաբեղուն կամաւոր ծառայութեանց՝ այսու Հայրապետական Կոնդակաւ Ձեզի կը շնորհենք Մայր Աթոռ Ս. Էջմիածնի

**Ս. ՆԵՐՍԷՍ ՇՆՈՐՀԱԼԻ** շքանշանը:

Կ՚աղօթենք առ Բարձրեալն Աստուած, որ Ձեզի և Ձեր ընտանիքին շնորհէ բազում տարիներ քաջառողջութեան, յաջողութեան և երջանկութեան բարիքներով առլցուն:

Ողջ լերուք ի Տէր, զօրացեալ շնորհօք Ս. Հոգւոյն, և յաւէտ օրհնեալ ի Մէնջ. Ամէն:

**ԳԱՐԵԳԻՆ Ա**
**ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ**

Տուաւ Կոնդակս ի 21 Ապրիլի
Ցամի Տեառն 1997 և ի թուին Հայոց ՌՆԽԶ
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
Ընդ համարաւ Ը/ 87